ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՆ <<ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը աշխարհագրություն առարկայի դասավանդման ընթացքում

Ղեկավար՝ Բեյբության Հասմիկ Ուսուցչուհի՝

Ամիրխանյան Տաթևիկ Դպրոց՝ Ծովակի

միջնակարգ դպրոց

ՎԱՐԴԵՆԻՍ 2022 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

1. Գրական ակնարկ.....4

2. Փորձարարական հետազոտություն.....10

2.1.Խմբի նկարագիրը.....10

2.2.Փորձարարական մաս.....10

3. Վերլուծություն.....14

Եզրակացություն.....16

Օգտագործված գրականության ցանկ.....17

Հավելված.....18

Դասապլան-1.....18

Դասապլան-2.....22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հանրակրթական դպրոցում աշխարհագրության ուսուցման անհրաժեշտությունը պայմանավորված է գիտության այդ ճյուղի աշխարհայացքային, համամշակութային, կրթաճանաչողական, գործնական նշանակությամբ, սովորողների հայրենասիրական և բնապահպանական դաստիարակության, մտածողության որոշակի մակարդակի ձևավորման գործում նրա ունեցած կարևորությամբ:

<<Աշխարհագրություն>> դպրոցական առարկայի նպատակն է սովորողների մեջ ձևավորել նվազագույն աշխարհագրական և քարտեզագրական մշակույթ, որն անհրաժեշտ է լիարժեք քաղաքացու համար՝ անկախ ապագա մասնագիտությունից ու գործունեության ոլորտից:

Աշխարհագրությունը հանրակրթական միակ առարկան է, որ տալիս է Երկրի՝ որպես մարդկության մոլորակի և նրա վրա մարդկային հասարակության տարածքային կազմակերպման մասին անմիջական պատկերացում: Դա պայմանավորված է գիտական գիտելիքների համակարգում աշխարհագրության տեղի և ներքին կառուցվածքի յուրօրինակությամբ: Գործ ունենալով ինչպես բնական պայմանների, այնպես էլ հասարակական օբյեկտների ու երևույթների հետ՝ աշխարհագրությունը գտնվելով բնագիտական, տեխնիկական և հասարակագիտական գիտությունների շփման հատվածում, սերտորեն փոխկապված է դրանց հետ:

Աշխարհագրությունն է, որ արդի աշխարհը իր զարգացման օրինաչափություններով և օրեցօր բարդացող հիմնախնդիրներով ճանաչելի է դարձնում սովորողին, ծանոթացնում է նրան տարբեր երկրների բնությանը, բնակչությանն ու տնտեսությանը, տարբեր ժողովուրդների սովորություններին, հյուրական ու հոգևոր մշակույթին:

Աշխատանքի նպատակը: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը աշխարհագրություն առարկայի դասավանդման ընթացքում:

1. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Աշխարհագրությունը բոլոր երկրների դպրոցների առանցքային հանրակրթական առարկաներից է և պատշաճ տեղ է գրավում ուսումնական ծրագրերում[1]:

Դպրոցական աշխարհագրությունն ունի կրթական և դաստիարակչական բացառիկ նշանակություն: Այն դպրոցական մյուս դասընթացների հետ միասին իրականացնելով ընդհանուր խնդիրներ, ունի նաև եզակի գործառույթ:

Հանրահայտ է աշխարհագրության՝ որպես հանրակրթական դպրոցի հիմնական առարկայի աշխարհայացքային և համամշակութային դերը: Աշխարհագրությունն է, որ Երկրի վրա ընթացող բնական և հասարակական երևույթների զարգացման օբյեկտիվ օրենքների ու օրինաչափությունների օրինակով ձևավորում է սովորողների մատերիալիստական աշխարհայացք, երևույթների միջև եղած կապերի պատճառականության և աշխարհի միասնականության համոզմունք:

<<Աշխարհագրություն>> առարկայի դասավանդման ընթացքում տարբեր մեթոդների և հնարների կիրառմամբ հնարավորություն է ընձեռվում սովորողների մեջ ձևավորել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ:

Աշխարհագրությունը երիտասարդ սերնդի կրթության ու դաստիարակության գործընթացում աշխարհայացքային և ընդհանուր մշակութային կարևոր դերակատարում ունենալուց բացի, կոչված է սովորողին հաղորդելու նաև կիրառական նշանակության գիտելիքներ ու հմտություններ: Դրանցից առավել կարևորներն են.

1. յուրահատուկ միջազգային լեզվի՝ աշխարհագրական քարտեզից օգտվելու, ինչպես նաև պարզունակ քարտեզ-սխեմայի (տեղանքի հատակագծի) կազմման կարողություն,
2. տարբեր երկրներում ու միջազգային ասպարեզում առկա բնական և հասարակական երևույթների մասին բազմապիսի աղբյուրներից ստացվող տեղեկատվության ամբողջացման ու համակարգման կարողություն,

[1]Թորգոմյան Լ.Վ., Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, ուսումնական ձեռնարկ, Երևան, <<Տոներ>>, 2005 թ., էջ 47:

3. տեղանքում կողմնորոշվելու, բնության մեջ դիտարկումներ և չափումներ կատարելու կարողություն,
4. ժողովրդագրական և տնտեսական վիճակագրական տվյալների հետ աշխատելու կարողություն,
5. աշխարհագրական տեղեկատվական համակարգից (GIS) և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու տարրական կարողություն[2]:

Այդ ամենի հետ մեկտեղ աշխարհագրությունը միակ դպրոցական առարկան է, որը նախնական պատկերացում է տալիս նաև աշխարհագրական գիտությանը հարակից մի շարք գիտությունների հիմունքների մասին, որոնց հատուկ ուսումնասիրությունը ինքնուրույն առարկայի ձևով չի մտնում հանրակրթության բովանդակության մեջ: Դրանք են՝ Երկրի մասին գիտությունները, մասնավորապես երկրաբանությունը և երկրաֆիզիկան, իսկ հասարակական գիտություններից՝ տնտեսագիտությունը, սոցիոլոգիան և ժողովրդագրությունը:

Դպրոցական աշխարհագրության կարևորագույն խնդիրներից է սովորողների աշխարհագրական մտածողության ձևավորումը: Վերջինիս հիմքը համակարգային տարածական մոտեցումն է՝ իր տարբեր մակարդակներով՝ համամոլորակային, տարածաշրջանային և տեղական (լոկալ) կամ հայրենագիտական:

Դպրոցական աշխարհագրության բովանդակության հիմքում ընկած են բնության և հասարակության օրենքների օբյեկտիվ իրողությունն ու ճանաչելիությունը, բնության և հասարակության փոխադարձ կապը, տարածաժամանակային փոխազդեցությունները և դրանց առաջընթաց զարգացումը:

Ուսումնասիրվող աշխարհագրական օբյեկտների և երևույթների փոխազդեցություններն ու զարգացումները բացահայտվում են հակադրությունների միասնության ու պայքարի, քանակական փոփոխություններից որակականին անցնելու, բացասման օրենքների հիման վրա:

Դպրոցական յուրաքանչյուր դասընթաց յուրովի է բացահայտում աշխարհայացքային այդ գաղափարները՝ ելնելով իր առանձնահատուկ բովանդակությունից: Հետազոտության իրենց առարկաներից (նեղ իմաստով՝ օբյեկտներից) ելնելով, և բնական (ֆիզիկական), և հասարակական (սոցիալտնտեսական)

Մանուկյան Ս.Պ., Ընդհանուր մանկավարժություն, Երևան, <<Զանգակ-97>>, 2005թ., էջ 105:

աշխահագրությունը ունի գիտական աշխարհայացք ձևավորելու, քանի որ դրանք ընդգրկում են բնական և հասարակական երևույթների լայն շրջանակ, իսկ գլխավորը՝ տալիս են բնական միջավայրի և հասարակության միջև օբյեկտիվորեն գոյություն ունեցող կապերը տեսնելու, սովորելու և հասկանալու հնարավորություններ:

Աշխարհագրական գիտելիքների շնորհիվ ամրապնդվում է այն համոզմունքը, որ աշխարհը ճանաչելի է, նյութական, միասնական, ամբողջական, բնության ու հասարակական կյանքի բաղադրիչները գտնվում են սերտ կապի մեջ, այդ բաղադրիչները առանձին-առանձին ու միասնաբար անընդհատ զարգանում և փոփոխվում են ժամանակի և տարածության մեջ:

Գիտական աշխարհայացքի ձևավորումն արդյունավետ իրականացնելու համար պետք է նկատի ունենալ դրա մանկավարժահոգեբանական օրինաչափությունները (սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները), դպրոցական աշխահագրության կրթադաստիարակչական խնդիրները:

Աշխարհագրության միջոցով տնտեսության, դրա ճյուղերի ուսումնասիրումը աշակերտներին հնարավորություն է տալիս ծանոթանալու աշխատանքային տարբեր գործունեության ոլորտներին, զանազան մասնագիտություններին, ինչը հնարավորություն է տալիս դպրոցականներին որոշելու սեփական հետաքրքրությունները՝ աշխատանքային գործունեության ընտրության ժամանակ:

Մեծ է դպրոցական աշխարհագրության դերը սովորողների բարոյագեղագիտական արժեքների ձևավորման գործում: Վերջինս հատուկ կարևորվել է հանրակրթության արդի բարեփոխման ռազմավարական խնդիրներում: Աշխարհագրական- հայրենագիտական աշխատանքները բնության գրկում ամրապնդում են աշակերտների առողջությունը, իսկ աշխատանքների ընթացքում հանդիպող դժվարությունների ու խոչնդոտների հաղթահարումը կոփում է նրանց բնավորությունը և առողջությունը, միաժամանակ, զարգացնելով ինքնուրույն գործունեություն ծավալելու որոշակի հմտություններ: Այդ աշխատանքները լայն հնարավորություն են ընձեռում սովորողների մեջ դաստիարակելու ընկերասիրության, մարդասիրության, համակեցության, փոխադարձ հարգանքի, իրար օգնելու մարդկային բարձրարժեք գծեր, ինչպես նաև համատեղ նախագծեր կազմելու, հետազոտություններ իրականացնելու կարողություններ:

Դպրոցական աշխարհագրությունն իր ուրույն դերն է կատարում սովորողների այնպիսի ունակությունների զարգացման գործում, ինչպիսիք են դիտողունակությունը, երևակայությունը, տրամաբանությունը, խոսքը, հիշողությունը:

Դպրոցականների տարաբնույթ դիտարկումներն աշխարհագրությունից հնարավորություն են տալիս սովորողներին մի կողմից երևույթները տեսնել համալիր ձևով, մյուս կողմից, դրանք նպաստում են նրանց դիտողունակության զարգացմանը: Այդ առումով առանձնապես արժեքավոր են երկարատև դիտարկումները, որոնք շրջակա բնությունը և մարդու տնտեսական գործունեությունն ուսումնասիրելու ժամանակ հնարավորություն են տալիս համապատասխան հետևություններ կատարել կլիմայի, գետերի ռեժիմի, հողաբուսական ծածկի, մարդուն շրջապատող բնության ռացիոնալ օգտագործման և պահպանության առանձնահատկությունների վերաբերյալ:

Դպրոցականների երևակայության զարգացման կարևորագույն միջոցներ են համարվում ուսուցչի պատկերավոր խոսքը, երևակայական ճանապարհորդությունները քարտեզներով, առանձին տարածքների աշխարհագրական բնութագրերի կազմումը համապատասխան քարտեզներով և նկարներով:

Քարտեզների միջոցով տարբեր տարածքների աշխարհագրական բնութագրերի կազմումը, ինչպես նաև ստեղծագործական բնույթի աշխատանքների կատարումը սովորողների մոտ զարգացնում են տրամաբանական մտածողության այնպիսի կողմեր, ինչպիսիք են ապացուցելիությունը, դատողության հստակությունը, ճիշտ մտահանգումներ կատարելու կարողությունները:

Տեղից-տեղ աշխարհագրական տարբերությունների բացահայտման համար աշակերտները կիրառում են մտավոր գործունեության այնպիսի հնարներ, ինչպիսիք են համեմատությունը, համադրությունը, երևույթների և օբյեկտների դասակարգումը:

Մտածողության զարգացումը սերտորեն կապված է աշակերտի խոսքի զարգացման հետ: Ծանոթանալով մեծ թվով աշխարհագրական անունների, թվերի ու փաստերի հետ՝ զարգանում է աշակերտների հիշողությունը[3]:

Ամփոփելով նշենք, որ ավագ դպրոցներում աշխարհագրության ուսուցման գործընթացում՝ կախված թեմայից, դասի նպատակներից, դասարանից, սովորողների

Մանուկյան Ա.Մ., Մանուկյան Մ.Մ., Մանկավարժական տեխնիկա և տեխնոլոգիա, Երևան, <<Զանգակ- 97>>, 2000թ., էջ 64:

առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, տվյալ դասի կամ դասի առանձին հատվածի համար կարող են ընտրվել ուսումնական գործունեության տեսակները՝ ուսումնական նյութի բացատրում, լուսաբանում, մոդելների, քարտեզների դիտարկում, ցուցադրում, պատրաստում, տեղանքի դիտարկում, ուսումնասիրում, էքսուրսիաների անցկացում, նկարների, ֆիլմերի դիտում, քննարկում, ուսումնական ձեռնարկների և այլ աղբյուրների ուսումնասիրում, չափողական, գործնական և փորձնական աշխատանքների կատարում, գրաֆիկական և քարտեզագրական աշխատանքների կատարում, հիմնահարցերի հետազոտում, աշխարհագրական խնդիրների և վարժությունների կատարում, ստեղծագործական աշխատանքների կատարում, տեխնիկական սարքերով և գործիքներով աշխատանքների կատարում, խաղերի, մրցույթների, հանդեսների անցկացում, իրավիճակների և արդյունքների վերլուծում, հաշվետվությունների պատրաստում, գրավոր աշխատանքների կատարում, հաղորդում, բանավոր և գրավոր հարցադրումների, թեստային աշխատանքների, ստուգարքների անցկացում, նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծարգրերի օգտագործում, անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում:

Համագործակցային ուսուցման կազմակերպումը աշխարհագրության դասաժամի ընթացքում

Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը աշխարհագրություն առարկայի դասավանդման ընթացքում՝ համագործակցային մեթոդի միջոցով:

Աշխարհագրության դասաժամի ընթացքում համագործակցային մեթոդի կիրառման միջոցով հնարավորություն է ընձեռվում սովորողների մեջ ձևավորել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ:

Համագածակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում են հենց աշակերտների միջոցով[4]:

Պետրոսյան Հ.Հ., Կրթության ժամանակակից տեխնոլոգիաներ: Հարցերի, առաջադրանքների, թեստերի և խնդիրների ժողովածու, Երևան, <<Ան-Ջոն>>, 2008թ., էջ 85:

Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեքբերումը, այլև խմբային գործընթացի մշակման միջոցով հմուտ համագործակցողների (համագործակցային հմտություններ կիրառողներ) և գիտելիքների ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ կիրառողներ) ձևավորելը: Համագործակցային ուսուցումը մեծացնում է նաև սովորողների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը (ինքնահանաչման և ինքնուղղորդման հմտությունների կիրառումը):

Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է:

2. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2.1.Խմբի նկարագիրը

Իրականացնելով փորձարարական հետազոտություն, իմ կողմից նպատակ էր առաջադրվել աշխարհագրության դասաժամի ընթացքում համագործակցային մեթոդի կիրառման միջոցով խթանել սովորողների ինքնուրույնությունը, նախաձեռնությունը և ստեղծագործական ունակությունները:

Աշխարհագրությունն է, որ սովորողին մղում է ճանաչելու սեփական հայրենիքը, հասկանալու և գնահատելու նրա տեղն ու դերը հարափոփոխ աշխարհում, ընկալելու այն փոխադարձ կապերի բնույթն ու առանձնահատկությունները, որոնք գոյություն ունեն մի կողմից՝ մարդու և շրջակա միջավայրի, մյուս կողմից՝ Հայաստանի և նրա հեռու ու մոտիկ հարևանների միջև, և դրանով իսկ նպաստում է նրա ինչպես ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացմանը, այնպես էլ էկոլոգիական կուլտուրայի ու քաղաքական կուլտուրայի ձևավորմանը:

2.2.Փորձարարական մաս

Ուսուցման գործընթացում, իսկապես, կարևոր են համագործակցային աշխատանքները: Դասի ընթացքում խմբային աշխատանքի կիրառումը, ծավալելով որոնողական գործունեություն, ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու հնարավորություն է ընձեռում, որի շնորհիվ էլ աշակերտներն ավելի խորությամբ են յուրացնում ուսումնական նյութը, զարգանում է ճանաչողական ակտիվությունը և ստեղծագործական ինքնուրույնությունը:

Իմ կողմից կազմվել էր թեսթային առաջադրանք, որը խմբային աշխատանքի միջոցով պետք է աշակերտները կարողանային գրել:

1. Գրել Եվրասիայի երիտասարդ հասակի լեռները:

2. Գործող հրաբուխներ չեն:

ա.Նեմրութն ու Թոնդրակը բ.Վեզուվը և Էտնան

գ.Կլյուչևսկայա Սոպկան և Ցուձիյաման դ.Էլբրուսը և Կազբեկը

3. Եվրասիայի արկտիկական կլիմայական գոտու վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ: ա.Տեղումների միջին տարեկան քանակն ընդամենը 400-500 մմ է:

բ.Տեղի է ունենում ինտենսիվ գոլորշացում:

գ.Ամառային միջին ջերմաստիճանները մոտ են 0-ին

դ.Ամռանը տիրապետում են բարեխառն օդային զանգվածները: 4.Ո՞ր կլիմայական գոտում է Հնդկաչին թերակղզի:

ա.հասարակածային բ. մերձհասարակածային գ.արևադարձային դ. մերձ արևադարձային

5.Ի՞նչ աշխարհագրական օբյեկտներով է բաժանվում Եվրոպան Ասիայից:

6. Գրել Եվրասիայի ՝ Խաղաղ և Հյուսիսային օվկիանոսին պատկանող գետերը (ամենաերկարը, ամենաջրառատն ու ամենամեծ ջրհավաք ավազան ունեցողը):

7. Հյուսիսային Ամերիկայի գործող հրաբուխ, կղզի, թերակղզի, լիճ, գետ աշխարհագրական օբյեկտների ճիշտ հերթականությունը ո՞ր շարքում է տրված:

ա. Ցուկատան, Ցուկոն, Բաֆինի երկիր, Օրիսաբա, Էրի

բ. Օրիսաբա, Բաֆինի երկիր , Ցուկատան, Էրի, Ցուկոն գ.

Օրիսաբա, Ցուկատան, Բաֆինի երկիր, Էրի, Ցուկոն

դ. Ցուկատան, Օրիսաբա, Էրի, Բաֆինի երկիր, Ցուկոն

8.Կատարել համապատասխանեցում:

ա.լյանոս 1.Խոնավ հասարակածային անտառներ

բ.պամպա 2.Սավանաներ՝ Օրինոկոյի դաշտավայրում և Գվիանական սարահարթում

գ.սելվաս 3. Սավանաներ՝Բրազիլական սարահարթում

դ.կամպոս 4.Մերձարևադարձային տափաստանները Լա Պլատայի դաշտավայրի հարավում

9. Հյուսիսային Ամերիկայի լճերը ո՞ր շարքում են դասավորված մակերեսի մեծության աճման կարգով:

ա.Մեծ Արջի, Մեծ Աղի, Վերին, Միչիգան բ. Վերին,

Միչիգան, Մեծ Արջի, Մեծ Աղի գ. Մեծ Աղի , Մեծ

Արջի, Միչիգան, Վերին դ. Վերին, Մեծ Արջի,

Միչիգան, Մեծ Աղի

10. Գրել Եվրասիայի տեկտոնական, հրաբխային, մնացորդային ծագման լճերը: 11.Ո՞ր շարքի

բոլոր ծառատեսակներն են աճում Տայգայում:

ա.կաղնի , հացենի, սոճի, թխկի բ. հացենի, եղևնի, թխկի, մայրի

գ.եղևնի, սոճի , մայրի, խեժափիճի դ. խեժափիճի , շագանակենի, սոճի, կաղնի

12.Օրինոկո գետի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ: ա.Սկիզբ է

առնում Գվիանական սարահարթից բ.Հորդանում է ամռանը

գ. Դելտա չի առաջացնում

դ.Նրա Զուրուն վտակի վրա է առաջանում Անխել ջրվեժը (1054մ) 13.Ո՞ր պնդումն է

սխալ:

ա.Հարավային Ամերիկայում լճեր քիչ կան:

բ.Տիտիկակա լիճը խոշոր լճերի շարքում աշխարհում ամենաբարձրադիրն է: գ.Տիտիկակա լիճը Հյուսիսային

Անդերում է:

դ.Մարակայբո լիճը Հարավային Ամերիկայի հյուսիսում:

14.Հոսուն լճեր չեն:

ա.Ուրմիան և Վանան բ. Բալխաշը և Իսիկ Կուլը գ. Բայկալը և Լադոգան գ. Կասպիցը և Արալը

Ուսուցչի առաջնային խնդիրներից մեկը կոլեկտիվի ստեղծումն է, իսկ այդ նպատակին կարելի է հասնել նաև խմբային աշխատանքներ կազմակերպելով: Աշխատանքը գերադասելի է կազմակերպել նախ զույգերով, ապա ավելի մեծ խմբերով:

Զույգերով աշխատելիս աշակերտները կվարժվեն համագործակցային աշխատանքին, կսովորեն լսել միմյանց, հարգել դիմացինի կարծիքը, ընդհանրացնել ասելիքը: Սա նախապայման կհանդիսանա ավելի մեծ խմբում աշխատելու համար:

3. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համագործակցային ուսուցումը ներկայացված է որպես ուսուցման մի արդյունավետ մեխանիզմ, որը մարդկանց համագործության սկզբունքներով ապրելու հնարավորություններ է ընձեռում: Համագործակցությունը հնարավորություն է ընձեռում սովորողների մեջ ձևավորել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ աշխարհագրության դասաժամի ընթացքում:

Վերլուծության ընթացքում դասարանը բաժանեցինք մի քանի խմբերի և նրանց հանձնարարեցինք խմբերով կատարել գործնական առաջադրանքներ:

Խումբ 1:

1.Սահմանել, ո՞րն է կոչվում ռասա: Թվարկել 4 հիմնական ռասայական տիպերը: 2 մ.

2.Կատարել համապատասխանեցում: 1 մ.

Բրունեյ	նախագահական	հանրապետություն
Դանիա	բացարձակ	միապետություն
Գերմանիա	սահմանադրական	Միապետություն
Բրազիլիա	խորհրդարանական	Հանրապետություն

3.Տրված պետություններից ո՞րն է միապետություն: 0,5 մ.

ա. Չինաստան բ.Իրան գ. Իսպանիա դ. Սիրիա

4.Զարգացող երկրներ չեն: 0,5 մ.

ա. Նորվեգիան և Ֆինլանդիան բ. Աֆղանստանը և Բանգլադեշը գ. Չադը և Եթովպիան դ.Չիլին և Վենեսուելան

5.Երկրի տարածքը կազմում է 20000 քառ. կմ, բնակչության միջին խտությունը՝ 350 մարդ/ քառ. կմ: Գտնել բնակչության թիվը: 1 մ.

Խումբ 2:

1.Ո՞ր պնդումն է սխալ: 1 մ.

ա. Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներին բնորոշ է ցածր ծնելիությունը, ցածր մահացությունը և ցածր բնական աճը:

բ. Ժողովրդական պայթյունը բնակչության թվի կտրուկ աճն է և բնորոշ է զարգացող երկրներին:

գ. Բնակչության վերարտադրության ցուցանիշների վրա առավել մեծ ազդեցություն են թողնում սոցիալ- տնտեսական գործոնները:

դ. Բնակչության վերարտադրության ամենաբարձր տեմպերը նկատվում են եվրոպական երկրներում:

2. Ո՞րքան կկազմի երկրի բնակչության բացարձակ բնական աճը, եթե բնակչության թիվը 6 մլն.է, ծնելիությունը կազմում է 15 պրոմիլ, մահացությունը՝ 10 պրոմիլ: 1,5 մ.

3. Բնակչության վերարտադրության երկրորդ տիպի երկիր է: 0,5 մ.

ա.Ռուսաստան բ. ԱՄՆ-ը գ. Գերմանիա դ.Պակիստան 4.Կատարել համապատասխանեցում: 0,5 մ.

հրեաներ	սինտոյականություն
չինացիներ	հինդուականություն
հնդիկներ	կոնֆուցիականություն
ճապոնացիներ	հուդայականություն

5. Բնութագրել եվրոպեոիդ ռասան: 1,5 մ.

Սովորողները խմբային աշխատանքի միջոցով ունենում են ինքնուրույն մտածելու, իրենց ստեղծագործական ունակությունները խմբում ցույց տալու և իրենց մտքերը փոխանակելու հնարավորություն:

Համագործակցային ուսուցումը ներառում է բազմաթիվ հնարքների օգտագործման հնարավորություններ, ենթադրելով սովորողների ինքնուրույն մտածողության լայն հեռանկարներ: Նրա ամբողջ նպատակը սովորողների տրամաբանական մտածողության զարգացումն է, որը կրթության համակարգում կարևոր և առաջնային հարց է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՈւԱումնաԱիրությունների և հետազոտությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

- Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ դպրոցական աշխարհագրությունն ունի կրթական և դաստիարակչական բացառիկ նշանակություն: Այն դպրոցական մյուս դասընթացների հետ միասին իրականացնելով ընդհանուր խնդիրներ, ունի նաև եզակի գործառույթ:
- Հանրահայտ է աշխարհագրության՝ որպես հանրակրթական դպրոցի հիմնական առարկայի աշխարհայացքային և համամշակութային դերը: Աշխարհագրությունն է, որ Երկրի վրա ընթացող բնական և հասարակական երևույթների զարգացման օբյեկտիվ օրենքների ու օրինաչափությունների օրինակով ձևավորում է սովորողների մատերիալիստական աշխարհայացք, երևույթների միջև եղած կապերի պատճառականության և աշխարհի միասնականության համոզմունք:
- <<Աշխարհագրություն>> առարկայի դասավանդման ընթացքում տարբեր մեթոդների և հնարների կիրառմամբ հնարավորություն է ընձեռվում սովորողների մեջ ձևավորել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ:
- Մեծ է դպրոցական աշխարհագրության դերը սովորողների բարոյագեղագիտական արժեքների ձևավորման գործում: Վերջինս հատուկ կարևորվել է հանրակրթության արդի բարեփոխման ռազմավարական խնդիրներում: Աշխարհագրական-հայրենագիտական աշխատանքները բնության գրկում ամրապնդում են աշակերտների առողջությունը, իսկ աշխատանքների ընթացքում հանդիպող դժվարությունների ու խոչնդոտների հաղթահարումը կոփում է նրանց բնավորությունը և առողջությունը, միաժամանակ, զարգացնելով ինքնուրույն գործունեություն ծավալելու որոշակի հմտություններ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թորգոմյան Լ.Վ., Մանկավարժության ընդհանուր հիմունքներ, ուսումնական ձեռնարկ, Երևան, <<Տոներ>>, 2005 թ.:
2. Մանուկյան Ս.Պ., Ընդհանուր մանկավարժություն, Երևան, <<Զանգակ-97>>, 2005 Թ.:
3. Մանուկյան Ա.Մ., Մանուկյան Մ.Մ., Մանկավարժական տեխնիկա և տեխնոլոգիա, Երևան, <<Զանգակ-97>>, 2000 թ.:
4. Պետրոսյան Հ.Հ., Կրթության ժամանակակից տեխնոլոգիաներ: Հարցերի, առաջադրանքների, թեստերի և խնդիրների ժողովածու, Երևան, <<Ան-Զոն>>, 2008 թ.:

4. ՀԱՎԵԼՎԱԾ

Դասապլան-1

ՈՒսուցիչ ՝ Տաթևիկ Ամիրխանյան

Առարկա՝	Աշխարհագրություն	Ամսաթիվ	18.01.2022	Կիսամյակ	II	Դասարան	X
Թեմա՝	Արեգակնային համակարգի և երկրի առաջացման վարկածները						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, գծապատկերներ						
Դասի նպատակը՝	Աշակերտը, ա)իմանա, թե ինչպես են առաջացել Արեգակնային համակարգը և Երկիր մոլորակը: բ)ներկայացնի որևէ վարկած,որը ըստ իրեն ավելի հավանական է: գ)զարգացնի Արեգակնային համակարգի և Երկիր մոլորակի առաջացման մասին իր ունեցած գիտելիքները:						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Աշակերտը կարողանա՝ ա)գնահատել որևէ վարկածի էությունը: բ)նկարագրել ջրային թաղանթի առաջացման գործընթացը Երկրի վրա: գ)կապեր գտնել երկնաբարային և պատահարային վարկածների միջև: դ)վերլուծել այն,թե ինչու՞ որևէ վարկած չնդունվեց գիտության կողմից և հիմնավորել: ե)համեմատել Արեգակնային համակարգի և Երկիր մոլորակի առաջացման նմանություններն ու տարբերություններն: զ)եզրակացության գալ ընդհանուր իրավիճակի մասին:						

Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվողմեթոդ(ներ)
5րոպե-սկիզբ 10րոպե-ընթացք	Աշակերտները դասարանը պատրաստում են խմբային աշխատանքի համար և սպասում են ուսուցչի հրահանգներին, Ներկայացնում են տնային աշխատանքները, Խմբերից յուրաքանչյուրը ստանում է մեկ թեմա, և պետք է դրա	Ողջունում է դասարանին, կատարում է ներկա բացակա, Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը, Աշակերտներին բաժանում է չորս խմբերի , բացատրում է	1.Հասարակական կյանքի ո՞ր ոլորտներում են օգտագործվում քարտեզները: 2.Ո՞րն է քարտեզների դերը կենցաղում,ի՞նչ առօրյա խնդիրներ կարելի է լուծել դրանց օգնությամբ: 3.Քարտեզների օգնությամբ տնտեսական և	

	վերաբերյալ նախ թղթի վրա , այնուհետ բանավոր ներկայացնի իր ունեցած գիտելիքները: Նախանշված ժամանակի ավարտից	աշխատանքի կանոնները և հանձնարարում է աշխատել: Խմբերից յուրաքանչյուրին տրվում է մեկ թեմա ՝	նախագծային ի՞նչ խնդիրներ կարելի է լուծել: *4.*Տարածքի գիտական հետազոտության ոլորտում քարտեզների քանի ուղղություն են առանձնացնում : *5.*Աշխարհագրական օբյեկտների վերաբերյալ ի՞նչ հաշվարկներ է հնարավոր կատարել քարտեզների օգնությամբ:	Հարցադրումներ ի մեթոդ
15 րոպե	հետո խմբերը հերթով ներկայացնում են իրենց թեման, իրենց խմբի եզրակացությունը գրելով գրատախտակին: Բոլոր խմբերի ներկայացնելուց հետո համեմատականներ են տարվում այս տեսակետների միջև, կատարվում է եզրակացություն:	Միգամածային վարկած,Պատահարային վարկած,Երկնաքարային վարկած և Խոքային գրավիտացիոն վարկած: Ներկայացնել վարկածների էությունը,վարկածները առաջ քաշող գիտնականներին,տալ հիմնավորում վարկածի թերությունների վերաբերյալ և ստեղծել սերտ կապեր դրանց միջև: Խմբերում աշխատելու համար տրվում է **15** րոպե: ՈՒսուցիչը հերթով մոտենում է խմբերին, անհրաժեշտության դեպքում ցուցումներ է տալիս, կատարում է շտկումներ: Ամբողջ դասի ընթացքում շեշտը դրվում է կոնկրետ վարկածի ճիշտ կամ		Համագործակցային ուսուցում Զրույցի մեթոդ Քարտեզագրման մեթոդ***T*** Հարց ու պատասխանի մեթոդ Մտագրոհի մեթոդ
		սխալ լինելու վրա,		

12բոպե		աշխատանքի և աշակերտների նպատակն համարվում է հիմնավորել գիտնականների վարկածը և վեր հանել բոլոր թերությունները: Նոր թեմայի հաղորդում աշակերտների մասնակցությամբ ՈՒսուցիչը կիրառում է << Մտագրոհ >> մեթոդը, որպեսի հասկանա, արդյո՞ք խմբերը լսում էին միմյանց և կարո՞ղ են պատասխանել նաև դասի մյուս հատվածներին վերաբերող հարցերին: ՈՒսուցիչը գնահատում է լավ և ակտիվ աշխատող խմբերի աշակերտներին և առանձին աշակերտների:		
3բոպե				
Տնային աշխատանք	Դասը հանձնարարել պատմել,տետրերում առանձնացնել վարկածը,այնուհետև այն առաջ բաշողին,և համացանցի միջոցով բացի վերը նշված վարկածներից,դուրս գրել նաև այլ վարկածներ Արեգակնային համակարգի և երկրի առաջացման վերաբերյալ:			

Դասապլան-2

ՈՒսուցիչ՝ Տաթևիկ Ամիրխանյան

Առարկա՝	Աշխարհագրություն	Ամսաթիվ	20.01.2022	Կիսամյակ	II	Դասարան	X
Թեմա՝	Երկրի ձևը,չափերը և ներքին կառուցվածքը						
Օգտագործվող նյութեր՝	Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր,գծապատկերներ,գլոբուս						
Դասի նպատակը՝	Աշակերտը ա) Իմանա որ,երկրագունդը պտտվում է իր առանցքի շուրջը 23ժամ 56րոպե և 0,4վրկում: բ)ներկայացնի երկրի ձևի և չափերի մասին գծապատկեր: գ)զարգացնի երկրի գնդաձևության և օրական պտույտի աշխարհագրական հետևանքների մասին իր ունեցած գիտելիքները:						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	Աշակերտը կարողանա՝ ա)գնահատել երկրի գնդաձևության և օրական պտույտի կարևորությունը,քանի որ այդ հետևանքները համարվում են կյանքի գոյության պայմաններից: բ)բացատրել բեռափայլի երևույթը: գ)վերլուծել երկրագնդի ոլորտների կազմն ու կառուցվածքը:						

Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվողմեթոդ (ներ)
5րոպե-սկիզբ	Աշակերտները դասարանը պատրաստում են խմբային աշխատանքի համար և սպասում են ուսուցչի հրահանգներին, Ներկայացնում են տնային աշխատանքները,	Ողջունում է դասարանին, կատարում է ներկա բացակա, Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը, Աշակերտներին բաժանում է երեք խմբերի , բացատրում է աշխատանքի	1,Ինչու՞ է անհրաժեշտ պարզել,թե ինչպես է առաջացել Արեգակնայի ն համակարգը: 2.Գիտական ո՞ր վարկածներն են ավելի համոզիչ	

		կանոնները և համձնարարում էաշխատել: Խմբերից յուրաքանչյուրին տրվում է երկրագնդի ներքին կառուցվածի մասին որևե հատված՝ Երկրի միջուկ,միջնապատյան,երկրակեղև: Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է ոլորտներում մթնոլորտային ճնշման բանակը,ջերմաստիճանը և խորությունները:Սերտ կապեր գտնել ոլորտների միջև և ներկայացնել գծապատկերի տեսքով; Խմբերում աշխատելու համար տրվում է **15** րոպե: ՈՒսուցիչը հերթով մոտենում է խմբերին, անհրաժեշտության դեպքում ցուցումներ է տալիս, կատարում է շտկումներ: Ամբողջ դասի ընթացքում շեշտը դրվում է ոլորտների	բացատրում արեգակնայի ն համակարգի ու երկրի առաջացումը: *3.*Ինչպե՞ս է առաջացել ջրային թաղանթը երկրի վրա: *4.*Ինչպե՞ս է ընթացել Երկրի ընդերքի տաքացումը: *5.*Յու.Շմիդտ ի առաջ հաշած վարկածը ինչպե՞ս էր կոչվում,և ինչպիսի հիմնավորում տվեց գիտնականը: *6.*Համացանց ից օգտվելով ներկայացրեք մեկ այլ վարկած:	
10րոպե–ընթացք	Խմբերից յուրաքանչյուրը ստանում է մեկ ներկայացնելու նյութ, և			
15 րոպե	պետք է դրա վերաբերյալ ներկայացնի իր ունեցած գիտելիքները: Նախանշված ժամանակի ավարտից հետո խմբերը հերթով ներկայացնում են իրենց թեման, իրենց խմբի եզրակացությունը գրելով գրատախտակին:			Հարցադրումներ ի մեթոդ Համագործակցային ուսուցում
12րոպե	Բոլոր խմբերի ներկայացնելուց հետո համեմատականներ են տարվում այս երեք ոլորտների միջև, կատարվում է եզրակացություն:	առաջացման,երկակեղևի ներքին կառուցվածքի և դրանց նշանակության վրա: Նոր թեմայի հաղորդում աշակերտների մասնակցությամբ ՈՒսուցիչը կիրառում է << Մտքերի տարափ>> մեթոդը, որպեսի հասկանա, արդյո՞ք խմբերը լսում էին միմյանց և կարո՞ղ են		Զրույցի մեթոդ Քարտեզագրման մեթոդ***T*** Հարց ու պատասխանի մեթոդ
3րոպե		պատասխանել նաև դասի մյուս հատվածներին վերաբերող հարցերին: ՈՒսուցիչը գնահատում է լավ և ակտիվ աշխատող խմբերի		

		աշակերտներին և առանձին աշակերտների:		Մտքերի տարափ
Տնային աշխատանք	Դասը հանձնարարել պատմել,տետրերում ներկայացնել երկրի ձևը և չափերը,ինչպես նաև երկրակեղևի ներքին կառուցվածքի վերաբերյալ գծապատկերներ:Ինքնուրույն պարզաբանել տարբերությունը երկիր մոլորակի պտույտը,իր առանցքի և Արեգակի շուրջը:			